# ՄԵՆՔ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՍ

Մենք՝ բանաստեղծներս,
Որ գիտենք նայիլ մարդոց սրտէն ներս,
Որ դէմ ենք կեղծիքին, սխալին, ստին,
Պաշտպանը հզօր՝ զրկուածին դատին:
Մենք չունինք խօսքեր շողոմ ու անոյշ,
Ինչ փոյթ ուրիշին ըլլանք «աչքի փուշ»:
Մեր խօսքն է դաշոյն, մեր բառերը՝ զէնք,
Որով փուք խիղճերն մենք կը հարուածենք:
Ու կը վերթեւենք երկինքն ամպածրար,
Խոհեր սրբազան կը բերենք աշխարհ:
Մերթ կ'ըլլանք խոհուն ու մերթ ալ յիմար,
Կեանքին ու մահուան աչքով հաւասար
Նայող էակներ առեղծուածային,
Նոյն սէրը տուող նորին ու հինին:
Մենք արդարութեան դատին ախոյեան,
Պիտի մեր խօսքով ապրինք յաւիտեան:

Մենք՝ բանաստեղծներս,
Վատին, անյոյսին հետ չունինք աղերս,
Մեր խօսքը հուր է, շչացող մտրակ,
Չարին սիրտն մխուած թունաւոր նշդրակ.
Անիրաւուածին պաշտպանն ենք հզօր,
Այրած սրտերուն՝ քնաբեր օրօր:
Մենք «մուսա»ներուն դարպասող խենթեր,
Աշխարհի բուքին դէմ միշտ աներեր.
Թմրած խիղճերուն՝ անսպառ կորով,
Խոցուած սրտերուն՝ մայրական գորով:

Թող այպանեն մեզ ու թող քամահրեն
Չոր մտքերն ու փոքն մարդերն անօրէն,
Մարդերը որոնք կը փախչին մարտէն,
Ու հզօրին դէմ լոկ սողալ գիտեն,
Քծնող, կեղծպարիշտ՝ բիրտ ոյժն կը պաշտեն:

Ով ըլլայ քերթող ու չըլլայ այսպէս,
Ու դաւել փորձէ կոչումին իր վէս,
Ես այդպիսին չեմ կոչեր բանաստեղծ,
Այլ թուղթ մրոտող գրչակ մը տխեղծ:

digitised by A.R.A.R.@

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԾԿԱԳՐԵՐ

*Հայերէն ձեռագիրներու մէջ յաճախ կը տեսնուին ծածկագրուած բառեր կամ տողեր, որոնք ծանր կամ թեթեւ աշխատանքով վերծանուած են բանասէրներու կողմէ։ Մեր այս յօդուածին նիւթ պիտի կազմեն շարք մը ծածկագիրներ որոնք կարօտ են վերծանումի։*

*Նախ կ՚առնենք քանի մը երկգիր ծածկագիրներ։*

1. — *Ցուցակ Ձեռագրաց Անկիւրիոյ, Անթիլիաս,* 1957, *էջ* 824. — *Ձեռամբ անիմաստ «խչ, եձ, ոք, խչ, (ժա), ժւ, գչ, լք, ժն, ոք, (զփ), չփ». այսինքն՝ Ասլան կուլի։ Կլոր փակագիծի մէջ առինք* ժա և զփ *զոյգերը որովհետեւ սխալ էին, և անոնց տեղ նշանակեցինք ճիշդ զոյգերը՝* ժւ և ըփ*։ Նոյն Ասլան կուլի գպիրը երկու տարի յետոյ իր անունը ծածկագրած է սիւնակէտագրով,* 1680 *թուին (Նոյն, էջ* 1266)։

2. — *Նոյն, էջ* 882, *ուր կան հինգ այլաձեւ ծածկագրութիւններ. երկրորդն է, «խչ, եձ, էճ, լք, ժն, (բպ), խչ, բպ, [խչ], թց, էճ, լք, ժն, ըմ», այսինքն՝ Աստուածատուր։ Կլոր փակագիծի մէջ առինք* բպ *զոյգը, որ սխալ է, և անկիւնաւոր փակագիծով աւելցուցինք* խչ *զոյգը, որ կը՚պակսէր։*

3. — *Ցուցակ Ձեռ. Նոր Ջուղայի, Ա., Վիեննա,* 1970, *էջ* 251. — *«Ես, չփ, լո, էճ, ճտ, ըմ, եձ, էճ, ձս, իշ, խչ, ժւ, լք, եձ», այսինքն՝ Զիք տէր Ստեփանոս։ Նոյն Ստեփանոս Զիք Երէցը իր անունը ծածկագրած է «ՈԱնքիս ձոներ Ստեփ էցս» ձեւով,* 1628*ին (Ցուցակ Ձեռ. Ջմմառի, Բ., էջ* 80)։

*Հետագայ ծածկագիրները բաղադրեալ ձեւ ունին և այդ պատճառաւ դժուարացած է անոնց վերծանումը։*

4. — *Թորոս Աղբար, Ա., Կ. Պոլիս,* 1879, *էջ* 77. — *«Զմեռեալս հոգւով յիշեա ով ժառանգաղ»։*

| | | |
|---|---|---|
| | « ‖...... \|. ‖‖... \|... \|.. \|..... ‖‖...... ‖.. » | *սիւնակէտագիր* |
| *« Ե դ տ լ դ լ տ »* | *կ ա վ գ բ ե ց ի* | *ծածկագիր* |
| *զ ե ր ե* | *բ բ ա դ ւ* | *եղբայրագիր* |
| *ո* | *վ ն ո թ յ մ ն* | *փոխարինագիր* |
| *ո ե ր լ ե վ ն* | *ո թ յ մ ա ն ւ ի* | *խառնագիր* |
| *ներելով* | *Թումային* | *վերծանութիւն* |

Դուք, բանաստեղծներ, գիտցէք ձեր սրտէք,
Ձեր պատուանդանէն փողոց մի՛ իջնէք։
Որ դուք միշտ ապրիք, ձեր լայն սրտերուն
Անմահանալու հրճուանքը անհուն։
Տուէ՛ք արուեստի սէրը մարդերուն,
Արհամարհեցէ՛ք փուշին դարերուն։

Գ. ՃԱՐՏԱՐ

digitised by A.R.A.R.@